ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Աջակցություն երիտասարդներին և երիտասարդական կազմակերպություններին

Եվրոպական երիտասարդական հիմնադրամը սատարում է երիտասարդների միջև համագործակցությանը՝ ֆինանսական աջակցություն տրամադրելով եվրոպական ծրագրերին, որոնք նպաստում են Եվրոպայի և ողջ աշխարհի երիտասարդների միջև խաղաղությանը, փոխըմբռնմանը և համագործակցությանը՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հանդեպ հարգանքի ոգով:

Youth – Jeunesse

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Եվրոպայի խորհրդի նպատակն է պաշտպանել մարդու իրավունքները, ժողովրդավարությունը և օրենքի գերակայությունը եվրոպական ողջ մայրցամաքում: Կազմակերպությունը ստեղծվել է 1949թ.-ին երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո և Եվրոպայի ամենահին քաղաքական կազմակերպությունն է: Այսօր կազմակերպությանն անդամակցում է 46 պետություն:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Երիտասարդական հատվածի առաքելությունն է «հնարավորություն տալ երիտասարդներին **ամբողջ Եվրոպայում ակտիվորեն պահպանել, պաշտպանել և խթանել Եվրոպայի խորհրդի հիմնարար արժեքներն ու օգուտ քաղել** այդ արժեքներից»:

Երիտասարդական հատվածն այս առաքելությունն իրականացնում է երիտասարդական քաղաքականության շուրջ միջկառավարական համագործակցության, մարդու իրավունքների և ժողովրդավարության ոլորտում վերապատրաստման և կրթական ծրագրերի, քարոզարշավների և համագործակցության ծրագրերի, հետազոտությունների մշակման և երիտասարդական կազմակերպությունների նախագծերին աջակցելու միջոցով:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- **բազմակարծ ժողովրդավարության վերակենդանացում**, ժողովրդավարական քաղաքացիության և մասնակցային քաղաքականության խթանում, մասնակցության խոչընդոտների վերացում,
- **երիտասարդների համար իրավունքների հասանելիություն**, այս ոլորտում Եվրոպայի խորհրդի չափորոշիչների կիրառմանն աջակցություն, մարդու իրավունքների վերաբերյալ կրթության խթանում,
- **համակեցություն խաղաղ և ներառական հասարակություններում**, հակազդում խտրականությանը, բռնությանը և բացառմանը, եվրոպական միասնության, գլոբալ համերաշխության, խաղաղության, բազմազանության, միջմշակութային և միջսերնդային երկխոսության և կայուն շրջակա միջավայրի խթանում,
- **երիտասարդական աշխատանք**, երիտասարդական աշխատանքի հզորացում, ճանաչում և առաջխաղացում, որակի բարելավում և հասանելիության ու գրավչության ընդլայնում:

(Երիտասարդական հատվածի ռազմավարություն, 2030թ.)

Եվրոպայի խորհրդի երիտասարդական հատվածում երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչները՝ որպես իրավահավասար գործընկերներ, կառավարության ներկայացուցիչների հետ միասին երիտասարդության առաջնահերթությունների, ծրագրերի և քաղաքականության վերաբերյալ որոշումներ են կայացնում:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ (ԵԵՀ)

ԵԵՀ-ն տրամադրում է ֆինանսական և կրթական աջակցություն երիտասարդական կազմակերպություններին՝ երիտասարդական ծրագրեր իրականացնելու համար, որոնք մշակվում են Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների և Եվրոպական մշակութային կոնվենցիային միացած պետությունների երիտասարդների կողմից, երիտասարդների հետ և նրանց համար:

Եվրոպական երիտասարդական հիմնադրամը ստեղծվել է Եվրոպայի խորհրդի կողմից 1972թ.-ին:

ԵԵՀ-ի ուղղորդող սկզբունքն է՝

Երիտասարդների ԿՈՂՄԻՑ, Երիտասարդների ՀԵՏ և Երիտասարդների ՀԱՄԱՐ:

ԵԵՀ-ի ՄԱՍԻՆ՝ ՀԱԿԻՐԱ

- ԵԵՀ-ն աջակցում է երիտասարդական միջոցառումներին, երիտասարդական աշխատանքին և երիտասարդական կազմակերպություններին Եվրոպայում:
- ԵԵՀ-ն Եվրոպայի խորհրդի երիտասարդական հատվածի գործիքներից մեկն է, որը խթանում է կազմակերպության արժեքներն ու առաջնահերթությունները:
- ԵԵՀ-ն տեղական, ազգային և միջազգային երիտասարդական հասարակական կազմակերպությունների և ցանցերի գործընկերն է՝ քաղաքացիական հասարակության ամրապնդման համար:

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՏԱՐԻ

- ԵԵՀ-ի կողմից ֆինանսավորվում է մոտ 200 երիտասարդական ծրագիր:
- ԵԵՀ-ի կողմից ֆինանսավորած ծրագրերում նեգրավված երիտասարդների թիվը հասնում է շուրջ 15000-ի:
- ԵԵՀ-ի կողմից երիտասարդական հասարակական կազմակերպություններին տրամադրված դրամաշնորհների չափը կազմում է շուրջ 3.5 մլն. եվրո:

ԵԵՀ-ը գտնվում է Ֆրանսիայի Ստրասբուրգ քաղաքում: Գրասենյակները տեղակայված են Եվրոպական երիտասարդական կենտրոնում: ԵԵՀ-ն Ժողովրդավարության տնօրինության Երիտասարդական բաժնի մաս է կազմում: ԵԵՀ աշխատանքային լեզուներն են անգլերենն ու ֆրանսերենը:

ԻՆՉԻ՞Ն Է ԱՋԱԿՑՈՒՄ ԵԵՀ-Ն

- ԵԵՀ-ն աջակցում է այն միջոցառումներին, որոնք ուղղված են երիտասարդների միջև խաղաղության և համագործակցության ամրապնդմանը, ցանցերի ստեղծմանը, փոխանակմանը և փոխադարձ աջակցության խրախուսմանը:
- ԵԵՀ-ն աջակցում է այն երիտասարդական ծրագրերին, որոնք համահունչ են Եվրոպայի խորհրդի երիտասարդական հատվածի արժեքներին, սկզբունքներին և առաջնահերթություններին:
- ԵԵՀ-ն աջակցում է բազմազան միջոցառումների, ինչպիսիք են իրազեկման արշավները, կարողությունների զարգացման միջոցառումները, հետազոտությունները, առցանց գործիքների և կրթական կամ տեղեկատվական նյութերի ստեղծումը:

ԵԵՀ-ն աջակցում է այնպիսի ծրագրերի, որոնք՝

- ներառում են հիմնականում 15-30 տարեկան երիտասարդների,
- հիմնված են երիտասարդների կարիքների և ձգտումների վրա,
- ունեն եվրոպական չափում, ծածկույթ,
- հիմնված են ոչ ֆորմալ կրթության մեթոդաբանության վրա,
- հաշվի են առնում գենդերային հավասարությունն ու մեկուսացված (մարգինալացված) խմբերի ներառումը:

ԵԵՀ-Ն ՉԻ ԱՋԱԿՑՈՒՄ

Միջոցառումներ, ինչպիսիք են կոմերցիոն նախագծերը, պաշտոնական հանդիպումները, մարդասիրական օգնությունը, սպորտային միջոցառումները, շինարարական աշխատանքները, զբոսաշրջությունը կամ կրթաթոշակները:

Ո՞Վ ԿԱՐՈՂ Է ԴԻՄԵԼ ԵԵՀ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների և Եվրոպական մշակութային կոնվենցիային միացած պետությունների երիտասարդական ՀԿ-ներ, ինչպիսին են՝

- ազգային կամ տեղական երիտասարդական ՀԿ-ներ,
- միջազգային երիտասարդական ՀԿ-ներ, որոնք գործունեություն են ծավալում առնվազը 7 երկրներում,
- երիտասարդական հասարակական կազմակերպությունների միջազգային ցանցեր՝ առնվազն 7 երկրներից անդամներով,
- երիտասարդական կազմակերպությունների տարածաշրջանային ցանցեր 4-6 երկրներից անդամներով

Դիմորդ կազմակերպությունները պետք է լինեն՝

- **շահույթ չհետապնդող և ոչ պետական**,
- ունենան իրենց սեփական կանոնադրությունը,
- առաջնորդվեն երիտասարդների կողմից՝ գործեն 15-30 տարեկան երիտասարդների ջանքերով և նրանց համար,
- գործեն Եվրոպայի խորհրդի արժեքներին և սկզբունքներին համահունչ:

ԵԵՀ ԴՐԱՄՇՆՈՐՀՆԵՐԸ

ԵԵՀ-ն տրամադրում է չորս տեսակի դրամաշնորհ՝

- Դրամաշնորհներ տեղական կամ ազգային ծրագրերի համար (պիլոտային ծրագրեր), որոնք ուղղված են երիտասարդների առջև ծառացած մարտահրավերների հաղթահարմանը և տեղական մակարդակում նրանց կարիքներին:
- Դրամաշնորհներ միջազգային ծրագրերի համար: Դրանք են երիտասարդների կամ երիտասարդ առաջնորդների հանդիպումները, որոնք ունեն հստակ եվրոպական չափում:
- Դրամաշնորհներ միջազգային երիտասարդական ՀԿ-ների և ցանցերի համար՝ ի աջակցություն մեկ տարվա ընթացքում նրանց գործունեության տարեկան ծրագրերի իրագործման (հաջորդական և փոխկապակցված գործողությունների խումբ):
- Դրամաշնորհներ միջազգային երիտասարդական ՀԿ-ներին և ցանցերին՝ նրանց ընդհանուր վարչական ծախսերը հոգալու նպատակով:

ԵԵՀ ԿՐԹԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԵԵՀ-ն տրամադրում է՝

- խորհրդատվություն երիտասարդական ՀԿ-ներին՝ հստակեցնելու և բարելավելու ԵԵՀ-ին ներկայացվող նրանց ծրագրային առաջարկները,
- կրթական և կարողությունների զարգացման աջակցություն երիտասարդական ՀԿ-ներին՝ նրանց ծրագրերի որակի բարելավման նպատակով,
- **տեղեկատվական հանդիպումներ՝ շահառուներին և գործընկերներին ԵԵՀ-ի զարգացումները ներկայացնելու նպատակով**,
- գործիքներ՝ երիտասարդական ծրագրերի որակը բարելավելու համար:

ԻՆՉՊԵՍ ԴԻՄԵԼ ԵԵՀ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ՝ ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ

1. Գրանցում ԵԵՀ-ում՝ ներկայացրեք գրանցման հայտը ԵԵՀ առցանց համակարգում (fej.coe.int),
2. **Դրամաշնորհի առցանց հայտի ներկայացում՝ սահմանված ժամկետներում**:
3. Ներկայացված հայտի գնահատում: Այս գործընթացը կարող է ներառել հայտատու կազմակերպության հետ հաղորդակցություն նրանց առաջարկը հստակեցնելու նպատակով:
4. Երիտասարդական հարցերով ծրագրային հանձնաժողովի կողմից հայտի վերաբերյալ որոշման կայացում:

Երիտասարդական հարցերով ծրագրային հանձնաժողովը երիտասարդական հատվածի համատեղ կառավարվող կանոնադրական մարմին է՝ կազմված երիտասարդական ՀԿ-ների և կառավարությունների ութական ներկայացուցիչներից:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ (ԵԵՀ)

Council of Europe
30, rue Pierre de Coubertin
F-67000 Strasbourg, France
+33 3 88 41 20 19
eyf@coe.int
http://eyf.coe.int
www.coe.int/en/web/youth/youth-strategy-2030

Հետեւեք մեզ

HYE

www.coe.int

Եվրոպայի խորհուրդն առաջատարն է մայրցամաքում մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունների շարքում: Եվրոպայի խորհրդին անդամակցում են 46 պետություններ, այդ թվում՝ Եվրոպական միության բոլոր անդամ պետությունները: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային՝ որպես մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը միտված միջազգային պայմանագրի: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումն անդամ պետություններում:

EYF european youth foundation fonds européen pour la jeunesse

Youth – Jeunesse

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE